ուղեհատվածներում երբեմն դառնում է գրեթե անհնար:

Խրամուղու նախագծային լայնությունը շատ հաճախ թույլ չի տալիս հատկապես խոր հորիզոններից առանց նախնական փխրեցման կամ ջարդոտման խրամուղուց հանել խոշորակտոր բեկորանյութը մանավանդ այն դեպքերում, երբ վերջիններս իրենց երկարությամբ տեղադրված են լինում խրամուղու ծրագծին ընդլայնական:

Սարուխան համայնքի ջրարբիացման համակարգի գլխամասային հանգույցի փոփոխության հինք է հանդիսացել Պատվիրատուի և համայնքապետարանների կողմից ներկայացված նամակները: Մասնավորապես Կարմիրի և Սարուխանի համայնքապետերը նշել են,որ մաքուր ջուրենուզում,քանի որ այդ ջրից օգտվելուեն այդ համայնքների օբանների բնակիչները խմելու և կաթնամթերք պատրաստելու համար:Ուստի առաջացել է մաքուր ջրի քանակի ավելացման անհրաժեշտություն:

Ելնելով վերը նշվածից մեր կողմից ջրընդունիչ կառույցը ծածկվել է և ջուրը վերցվել է աղբյուրների ակունքներից՝ խուսափելով ջրի աղտոտումից և ապահովելով հնարավորինս մաքուր ջրի մուտք կառուցվող համակարգ:

- **ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիր համայնքի արոտավայրերի ջրարփիացման ցանցի կառուցման աշխատանքների իրականացման թիվ NCB-CARMAC2-CP-16-G-14/02 պայմանագիր:**

Կապալառու <ՇԻՆԱՇԽԱՐՀ>ՍՊԸ-ի տնօրենը 30.09.2016թ.թիվ Ե-61 գրությունով դիմել է պատվիրատուին՝ նշելով,որ իրենց կարծիքով ՆԿ00+70-ՆԿ5+70 և ՆԿ13+00-ՆԿ30+00 հատվածներում գրունտների փաստացի երկրաբանական կարգը չի համապատասխանում նախագծայինին, և խնդրել է ուսումնասիրել առաջարկությունները և տալ լուծում:

Պատվիրատուն նշված առաջարկները 05.10.2016թ.-ին վերահասցեավորել է <ԱՆՈՒՇԻԿ ՁՐԵՐ>ՍՊԸ-ին՝ առաջարկելով ուսումնասիրել կապալառուի կողմից բարձրացված հարցերը, որին ի պատասխան <ԱՆՈՒՇԻԿ ՁՐԵՐ>ՍՊԸ-ն 28.10.2016թ-ի գրությունում նշել է, որ <<... բացված խրամուղու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեր կողմից տրված բնահողի մշակման կարգը համապատասխանում են ըստ ՇՆԱԿ IV-2-82 N 1 հավաքածուի մեջ նկարագրված բնահողերի տեսքերին, սակայն կրային ցեմենտով ուժեղ շաղկապվածության պատճառով բնահողի մշակման ժամանակ անհրաժեշտություն է առաջացել ՆԿ 3+60-ՆԿ 5+70, ՆԿ 7+70-ՆԿ 14+20 և ՆԿ 21+65-ՆԿ 22+80 հատվածներում կիրառել նախնական փխրեցում: Ելնելով ցեմենտային առկա աստիճանից այդ հատվածներում փխրեցումը կկամզի ընդհանուր ծավալի 45%-ը՝ այն է 700խմ ...>>

06.12.2016թ.-ին կատարվել է պայմանագրի փոփոխություն և փխրեցման աշխատանքների համար լրացուցիչ վճարվել է ***2,352 հազար դրամ***: Նշված գումարը վճարման ենթակա չէր, քանի որ եզրակացությունում, ի տարբերություն կապալառուի կարգի փոփոխման առաջարկությանը, նշվել է, որ բնահողի կարգը նախագծում ճիշտ է ընդունվել՝ 10զ/9դ V-րդ կարգ, և հետևաբար ըստ ՇՆԱԿ IV-2-82 հավաքածուի N 1 –ն այդ բնահողի մշակման համար նախնական փխրեցումը չի վճարվում:

Առարկություն՝

Կապալառու կազմակերպության նամակի հիման վրա կատարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքում բնահողերի մշակման խմբերը (կարգերը) չեն փոխվել, քանի որ ինչպես ծավալային կշռի, այնպես էլ հատիկաչափական կազմի առումով, որոնց հիման վրա որոշվում բնահողերի խումբը (կարգը), նախագծային ցուցանիշների հետշեղումներ չեն հայտնաբերվել:

Մորենային առաջացումները, որոնք դասվում են փխրաբեկոր նստվածքային առաջացումների խմբին, կրային ցեմենտով ամուր շաղկապվածության արդյունքում վերածվել են գրեթե կոնգլոմերատների,

որոնք հանդիսանում են կիսաժայռային ապարներ: Վերջիններիս մշակումը համեմատած փխրաբեկոր նստվածքների հետ անհամեմատ դժվար է և առավել աշխատատար:

Բնահողերի նախնական փխրեցման տարբերակը մեր կողմից ընտրվել է նկատի ունենալով երկու հիմնական պատճառ.

- *Խրամուղու փորումը էքսկավատորի միջոցով բնահողի առավել ցեմենտացված ուղեհատվածներում երբեմն դառնում էր գրեթե անհնար:*
- *Խրամուղու նախագծային լայնությունը շատհաճախ թույլ չի տալիս հատկապես խոր հորիզոններից առանց նախնական փխրեցման կամ ջարդոտման խրամուղուց հանել խոշորակտոր բեկորանյութը մամանավանդ այն դեպքերում երբ վերջիններս իրենց երկարությամբ տեղադրված են լինում խրամուղու ծրագծին ընդլայնական:*

- **ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքի արոտավայրերի ջրարբիացման ցանցի կառուցման աշխատանքների իրականացման Պայմանագիր թիվ CARMAC2-CP-15-G-5/02:**

30.05.2016թ. համայնքի ղեկավարը դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ <<... աղբյուրների ջրհավաք կապտաժի սանիտարական վիճակը ***<u>վայրի կենդանիների և անասունների</u>*** կողմից աղտոտելուց ապահովելու համար խնդրում եմ ջրարբիացման ծրագրի շրջանակներում կատարել տարածքի ցանկապատում ...>>: 07.07.2016թ-ին նույն խնդրանքով և սմեկանգամ համայնքի ղեկավարը դիմել է պատվիրատուին՝ ավելացնելով, որ ցանկապատումը իրականացվի մետաղական խողովակներով:

Նախագծային ընկերությունը նշված առաջարկություններին տվել է դրական եզրակացություն և

կատարել նախագծային փոփոխություններ: Ավելին, առաջարկած մետաղական խողովակներով ցանկապատի փոխարեն նախագծել է կլոր կտրվածքով մետաղական ճնշումային խողովակներով ցանկապատ (այլ օբյեկտներում փշալարով ցանկապատ նախագծելու պարագայում) և ընդամենը երկու աղբյուրակապի համար ցանկապատում 1.2 հա տարածք: Նշված հիման վրա պայմանագրային գինը ավելացվել և կատարողականով վճարվել է 8,920.9 հազար դրամով, այն դեպքում, երբ, համաձայն <<Լավո>> ՍՊԸ-ի կողմից 25.09.2015թ-ին տրված թիվ 103-15 փորձաքննության եզրակացության, նախագիծը համապատասխանել է ՀՀ-ում գործող նախագծային նորմերի պահանջներին, կամ ոչնչով չի հիմնավորվում ***8,921 հազար դրամի*** լրացուցիչ ցանկապատի կառուցման աշխատանքների անհրաժեշտությունը՝ կենդանիների կողմից խմելու համար կառուցվող աղբյուրը նույն կենդանիների կողմից աղտոտելուց պաշտպանելու համար:

Առարկություն՝

Ցանկապատված 1,2հա տարածքում գտնվում են Ծակքար, Ձորաքյուղ, Վարդաձոր և Երանոս համայնքների խմելու և ջրարբիացման ջուր ապահովող թվով 10-12 ջրաղբյուրներ:

- **ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի արոտավայրերում ջրարբիացման ցանցի կառուցման աշխատանքների իրականացման Պայմանագիր թիվ CARMAC2-CP-16-L-4/02**

Կապալառու <<ՕՍՏ-ՇԻՆ>> ՍՊԸ-ն և համայնքի ղեկավարը 03.10.2016թ թիվ 20 և 10.10.2016թ թիվ 82 գրություններով պատվիրատուին տեղեկացրել են, որ <<... ջրատաշտակ 5-ում իրականում չկա ջրի անհրաժեշտ քանակություն, այդ իսկ պատճառով վերոնշյալ ջրատարի կառուցման անհրաժեշտություն չկա...>>:

Նախագծային ընկերությունը տվել է իր համաձայնությունը 5-րդ ջրատաշտակը չկառուցելու վերաբերյալ: Կատարված պայմանագրի փոփոխությամբ նվազեցվել են այդ ջրատաշտակի կառուցման աշխատանքների

ծավալները,սակայն չենվազեցվել փարախից դեպի 5-րդ խմոց գնացող 139 խմ ավազակոպճային ծածկույթով ճանապարհի կառուցման աշխատանքները, իսկ այդ հատվածի ճանապարհի համար նախատեսված 93խմ 3-րդ կարգի բնահողի բուլդոզերով 20 մ տեղափոխման աշխատանքները նվազեցվելու փոխարեն ավելացվել են 230խմ-ով,ինչի արդյունքում կատարողականով ավել է հաշվարկվել և վճարվել ***1,092 հազար դրամով ((230խմ *616,2դ.դ +93խմ *616,2դ.դ +139խմ *5100դ.դ)*ԱԱՀ)***:

Բացի նշված փոփոխությունները համայնքի ղեկավարը և կապալառուն առաջարկել էին նաև <<... Ջրատաշտակ 2-ի աշխատանքները իրականացնելու ժամանակ հայտնաբերվել է նոր ջրային շերտեր,որը նախագծում չկա և այն չկորցնելու համար առաջարկվում է ավելացնել Φ225 մմ տրամագծի պոլիէթիլենային դրենաժային խողովակ՝ 20 մ երկարությամբ: Ջրատաշտակ 3-ի և Ջրատաշտակ 4-ի հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են գրունտային ջրեր: Հետագայում շահագործմանը չխանգարելու համար, առաջարկվում է վերոնշյալ յուրաքանչյուր ջրատաշտակի համար լրացուցիչ ավելացնել Φ225մմ տրամագծի պոլիէթիլենային դրենաժային խողովակ՝ 20 մ երկարությամբ ...>>

Այս առաջարկությունները ևս պատվիրատուն ուղարկել է <ՔՎԵ նախագիծ> ՍՊԸ-ին՝ առաջարկելով ուսումնասիրել և տալ մասնագիտական եզրակացություն բարձրացված հարցի վերաբերյալ:

Նախագծային կազմակերպության կողմից իրականացվել են փոփոխություններ, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է,որ առանց որևէ հիմնավորման.

- թիվ 1 ջրատաշտակում սխեմատիկ ավելացվել է 13գծ.մ Φ225մմ պոլիէթիլենային դրենաժային խողովակ՝ չտալով հստակ կոորդինատները և կտրվածքների չափերը,

- թիվ 1 ջրատաշտակում փոփոխվել է աղբյուրակապի տեղը ավելացնելով Φ50 մմ պոլիէթիլենային խողովակի երկարությունը 25 գծմ-ով՝ չնշելով նոր աղբյուրակապի հստակ տեղը՝ կոորդինատները, երկայնական և լայնական կտրվածքները,